Վարդանի Սաղմոսի մեկնութեան վերջում աւելացրած է հետևեալ նկատողութիւնը նորա վարժապետական գործունէութեան մասին. «ընդ որս երեւեալ ազքանազեան ազգիս ի տանէ Թորգոմա, փառք եւ պարծանք Այրարատեան գաւառիս և իբրև զարեգակն (նշանագրով) փայլէր յաշխարհի (նշանագրով) սքանչելի այրն ԱՀՅ և մեծանուն հռետորն Վարդան վդպն., վարժելով զբզմս. ի կրթասիրաց ի գիտութի. ԱՀՃՀունչ կոկրնց., երևելին ի գիտնականս, այլ և յոյժ ըղձալի փափագմամբ մեկնեալ զՍղմոս. ԱՀահօրն Դաւթի, թողու գանձ անհամեմատ սբ. եկեղցոյ. եւ ինքն առ անՀկալին Ցս. վերափոխի . . .»(*)։ Խոր Վիրապից 1267 թուին նա գալիս է Սաղմոսավանք և այնտեղից Աղջոց Ս. Ստեփանոս, ուր վերջացնում է



Պատկեր 196.

Դանիէլի մեկնութիւնը իւր իսկ յիշատակարանի համեմատ։ 1270 թուին մէկն էր նա Զագավանից ժողովի ղեկավարներից, որի կանոնները աշխարհիկ, դիւրահասկանալի լեզուով խմբագրում է Խոր Վիրապում։ Մահուանից քիչ առաջ՝ ՉԻԹ թուականից ունինք նորա ինքնաձեռագիր յիշատակարանը, որով յայտնում է, թէ Նիւսացու բնութեան, կազմութեան և կուսութեան, երեք հատուածներով գիրքը՝ Գրիգոր Բիշնեցունն է, «շնորհալից եղբաւր մերոյ և սպասաւորի բանին», որ «շարագծեալ է ի կրսերէ նորին ի Ստ. (Ստեփանոսէ)», նորան շնորհուած։ «Գրեցաւ յեռին գիրս առ դրան սրբոյ Վիրապիս» (Ցաւել. Բ. 60, պատկ. 196)(**)։ Այստեղ էլ մեռնում է նա իւր աշակերտակից Մաղաքիայի վկայութեամբ. «ի թուականին Հայոց ՉԻ (= 1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց Վարդան եւ Կիւրակոս»(*)։ Աշխարհացոյցի տեղեկութեամբ նա թաղուած է Խոր Վիրապում, «և ի բերան Վիրապին հանգուցեալ կան շիրիմ սբ. մեծահռչակ եւ եռամեծին տիեզերալոյս վրդպտին. Վարդանա»(**)։

Ե՞րբ է յարել Ներսէսը Վարդանին իւր աշակերտ և հայրենակից Նչեցու հետ, կարող ենք միայն մօտաւորապէս որոշել. 1265 թ. Վարդանը Զորագետումն էր, ուր նա գրել է երգ երգոցի մեկնութիւնը իւր հոգեւոր հարազատի՝ Կիւրակոս Գանձակեցու խնդիրքով «յաստուածամերձ սուրբ ուխտս Հաղբատա»(***). Նոյն թուականին, յամենայն դէպս ոչ ուշ քան 1266 թուի սկիզբը, եկել է նա Խոր Վիրապ, որովհետև տեսանք, որ Գրիգոր Բալուեցին այստեղ աշակերտել է նորան վեց տարի և վարդապետական գաւազան ստացել. 1266ին Վարդանի Խոր Վիրապում լինելու մասին վկայում է Գէորգ Լամբրոնացին(****). իսկ Վարդանի մահը տեսանք 1271 թուին։ Ահա այս վեցամեակումն էլ Ներսէս յարած պիտի լինի Վարդանին, եթէ ոչ աւելի վաղ. նոյն իսկ Վարդանի խօսքերով վկայութիւն ունինք, որ 1267 թուին Ներսէսը նորա մօտ էր. Դանիէլ մեկնութեան վերջում ողորմութիւն հայցել է խնդրում երախտաւոր իշխանների՝ Սաղունի, Սմբատի, Քրդի և Պռոշի հետ «եւ եղբօր մերոյ Ներսէս վրդ.ին, որ և զնա աշխատեցաք (s!) ի գիրս»(*****)։ Այս վերջաբանը Վարդանը գրել է 1268ին Աղջոց Ս. Ստեփանոսում։

Վարդանի մահուանից յետոյ՝ բայց Գլաձորում հաստատուելուց առաջ՝ նա կրկին վերադառնում է Մուշի Առաքելոց իւր նախկին վանքը և այնտեղ հաստատում իւր վարժապետական աթոռը. եօթանասնական թուականներից երկու ձեռագիր ունինք, որոնք գրուած են նորա համար. մէկը 1275, իսկ միւսը 1279 թուին նոյն վանքում։ Դոցանից մէկը Փիլոնի «Որ ի լինելութենէ խնդրոց եւ լուծմանց», «Որ յելսն խնդրոց եւ լուծմանց» եւն. գործն է. առաջինը (1–128ա) գրուած Գր(իգոր) գրչի կողմից, երկրորդ մասը մի անյայտ գրչի (129ա–235ա), իսկ մնացածը, որ դարձեալ Փիլոնինն է (235ա–329բ) Բարսեղ գրչի։ Գրիգորի յիշատակարանից տեղեկանում ենք (Ցաւել. Բ. 61, Ձեռ. Էջմ. № 3932), որ «հայրն հասարակաց Ներսէս վարդապետն խնդրել» է «ի նուաստ աշակ.

(*) Ձեռ. Էջմ. № 2522, 333բ։

(**) Ձեռ. Էջմ. № 456/469, 260բ։

(*) Մաղաքիա աբեղայ, Տպ. 1870, եր. 52, հրատ. Պատկանեանի։ Վարդանի մահը նաև Ձեռ. Էջմ. № 2188, 48բ։ № 1520, 116ա։

(**) Ձեռ. Էջմ. № 1187, 2179/2166, 7ա։ Լիմի № 358 նժ։

(***) Ձեռ. Էջմ. № 1155, 86բ, նաև № 1429/1419, 202ա–263։

(****) Մանանդեան և Ա՛հարեան, Հայոց նոր վկաները, գիտ. հրատ. եր. 105։ Շողակաթ, եր. 32/3։

(*****) Ձեռ. Էջմ. № 1520, 116ա։